

**ՄԻՋԱՐԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ/INTERNATIONAL LAW/
МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО**

DOI: <https://doi.org/10.59546/18290744-2023.1-3-100>

ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑ
պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր
ԵՊՀ քաղաքացիական
իրավունքի ամբիոնի վարիչ

ARMEN HAYKIAN
Professor, Doctor of Law
Head of YSU Civil Law Chair

АРМЕН АЙКЯНЦ
доктор юр. наук, профессор,
заведующий кафедрой Гражданского права ЕГУ

**ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕՐԵՆՔԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐ**

**SOME PRACTICAL ISSUES OF EXPLANATION
BY COURTS OF THE CONTENT OF FOREIGN LAW**

**НЕКОТОРЫЕ ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ
РАЗЪЯСНЕНИЯ СУДАМИ СОДЕРЖАНИЯ ИНОСТРАННОГО ПРАВА**

Օտարերկրյա տարրով ծանրաբեռնված մասնավոր հարաբերությունները՝ միջազգային մասնավոր հարաբերությունները, կարգավորվում են նախապատվելիորեն՝ նյութա-իրավական մեթոդով կամ կոլիզիոն-իրավական մեթոդով: Միջազգային մասնավոր հարաբերությունները կոլիզիոն-իրավական մեթոդով կարգավորելիս, այսպես կոչված՝ կոլիզիոն նորմերի միջոցով փնտրվում և ընտրվում է այն պետության իրավունքը, որը պետք է կիրառվի:

Դատարանը կոլիզիոն նորմերի կիրառմամբ, երբ ընտրում է օտարերկրյա պետության իրավունք, կանգնում է լուրջ խնդրի առջև՝ ինչպես է կիրառելու օտարերկրյա պետության իրավունքը, երբ դատարանը չի տիրապետում այդ իրավունքը: Դեռևս հինհռոմեական իրավական համակարգում հայտնի՝ «Jura novit curia - դատավորը գիտի օրենքը» իրավական պոստուլատը գործում է նաև այսօր, և ազգային իրավական համակարգերը նույն այդ պա-

հանջը կրկին առաջադրում են դատարաններին¹: Ազգային դատարանները ոչմիայն պետք է տիրապետեն և գիտենան դատարանի վայրի իրավունքը, այլև պետք է տիրապետեն և գիտենան այն օրենքը, որն ընտրվում է ազգային օրենսդրության մաս կազմող կոլիզիոն նորմերով:

ՀՀ քաղ.օր. 1255-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ «Օտարերկրյա իրավունք կիրառելիս դատարանը դրա նորմերի բովանդակությունը պարզում է համապատասխան օտարերկրյա պետությունում դրանց պաշտոնական մեկնաբանման և կիրառման պրակտիկային համապատասխան»: Վկայակոչված իրավադրույթը դատարանին ոչ միայն պարտավորեցնում է կիրառել կոլիզիոն նորմով ընտրված օտարերկրյա իրավունքը, այլև պարտավորեցնում է կիրառել ճիշտ՝ այն նույն մեկնաբանությամբ և կիրառման պրակտիկայով, որն ընդունված է համապատասխան օտարերկրյա պետությունում: Եթե դատարանը շեղվի այս պահանջից, հետագայում վերաքննության և վճռաբեկության կարգով կարող է վիճարկվել դատարանի որոշման օրինականությունը²: Դատարանին նման խիստ և պատասխանատու պահանջ առաջադրելով՝ պետությունը դատարանին չի կարող թողնել խնդրի լուծման առջև միայնակ և անզեն³: Պետությունը պարտավոր է նախատեսել այնպիսի իրավական մեխանիզմներ, որոնց գործադրմամբ դատարանը կկարողանա հաղթահարել իր համար անծանոթ, սակայն միևնույն ժամանակ կիրառման համար պարտադիր՝ օտարերկրյա օրենքը տիրապետելու բարդագույն խնդիրը, այլ կերպ ասած՝ պետությունը դատարանին պետք է օգնի, օժանդակի օտարերկրյա օրենքը կիրառելիս կրկին մնալու «Jura novit curia» արդարադատական բարձունքի վրա⁴:

ՀՀ քաղ.օր. 1255-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում համապատասխանաբար սահմանվում են.

2. Օտարերկրյա իրավունքի նորմերի բովանդակությունը պարզելու նպատակով դատարանը սահմանված կարգով կարող է դիմել Հայաստանի Հանրապետության և արտասահմանի իրավասու մարմինների աջակցությանը կամ ներգրավել մասնագետների:

3. Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն ներկայացնել օտարերկրյա իրավունքի նորմերի բովանդակությունը հավաստող փաստաթղթեր, որոնք նրանք վկայակոչում են իրենց պահանջները կամ առարկությունները հիմնավորելիս կամ այլ կերպ աջակցել դատարանին այդ նորմերի բովանդակությունը պարզելու համար:

Սրանք բոլոր այն մեխանիզմներն են, որոնց գործադրմամբ ՀՀ դատարանը կարող է տիրապետել կոլիզիոն նորմով ընտրված՝ օտարերկրյա պետության օրենքը և այդ շրջանակում գործ լուծել:

Վերոնշյալ մեխանիզմներից՝ դատարանի համար առավել արժանահավատ և հավաստիության բարձր գործակցով աչքի է ընկնում ՀՀ քաղ.օր. 1255-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվող մեխանիզմը, որը սակայն ձևակերպված է շատ ընդհանուր կերպով, հստակ չեն դրա իրականացման դետալային մանրամասները⁵: Համակարծիք ենք այն հնարավոր

¹ Տե՛ս Paane Л., Международное частное право /под ред. Л.А.Лунца/изд. Ин. Лит-ры, М., 1960, էջ 130:

² ile:///C:/Users/User/Downloads/Международное%20частное%20право.%20Учебник%20(%20PDFDrive%20).fb2.

³ Տե՛ս Валетова Ю.А., О некоторых способах установления содержания иностранного права судами Российской Федерации //https://cyberleninka.ru/article/n/o-nekotoryh-sposobah-ustanovleniya-soderzhaniya-inostrannogo-prava-sudami-rossiyskoy-federatsii:

⁴ Տե՛ս Терентьева Л.В., Общеправовая презумпция jura novit curia и отраслевая презумпция jura aliena novit curia международного гражданского процесса //file:///C:/Users/User/Downloads/obschepравovaya-prezumpsiya-jura-novit-curia-i-otraslevaya-prezumpsiya-jura-aliena-novit-curia-mezhdunarodnogo-grazhdanskogo-protessa.pdf:

⁵ Տե՛ս Хоцанов Д.А., Установление содержания иностранных правовых норм в международном частном праве, М.,

անդամներին, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չէր կարող դրանից ավելին մանրամասնել մեխանիզմի կիրառման դետալները, որ դրանք կարող են և պետք է մանրամասնվեն այլ աղբյուրներով:

Միանգամից ասենք, որ ՀՀ օրենսդրությամբ՝ որևէ աղբյուրով մանրամասնված չեն նման դետալներ: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման ուժով՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»: **Օրենսդիրը, դատարանին լիազորելով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության և արտասահմանի իրավասու մարմինների աջակցությանը և չհստակեցնելով այդ լիզորության իրացման իրավական մեխանիզմները, իրավական խոչընդոտ է հարուցում օտարերկրյա իրավունքի բովանդակության պարզաբանման համար համապատասխան մեխանիզմի գործադրման հարցում:**

Միջազգային մասնավոր-իրավական կարգավորման մշակույթում ընդունված է, որ պետություններն իրավական օգնության շուրջ կնքում են միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրեր, որոնցով էլ պարտավորվում են միմյանց արդարադատության մարմիններին տրամադրել ազգային օրենսդրության մեկնաբանման և կիրառման պրակտիկայի վերաբերյալ պահանջվող տեղեկատվություն⁶: Հայաստանի Հանրապետությունը երկկողմ մակարդակով նման պայմանագրեր կնքել է մի շարք երկրների հետ (Բուլղարիա, Լիտվա, Հունաստան, Ռումինիա, Սիրիա, Վրաստան), իսկ բազմակողմ մակարդակով հայտնի են միայն **Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին Մինսկի 1993 թ. կոնվենցիան**, և բոլորովին նույն անվանումով՝ **2002 թ. Քիշնևի կոնվենցիան**: Բայց ինչ մանրամասնությամբ են կարգավորվում ազգային օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման գործընթացները, բավական է կնքված միջազգային պայմանագրերից մեջբերել առանձին իրավադրույթներ: Այսպես, Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին 1995 թ. ստորագրված պայմանագրի 24-րդ հոդվածով սահմանվում է. «**Տեղեկության փոխանակումը Կենտրոնական մարմինները պահանջի դեպքում ուղարկում են ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև դատական որոշումների պատճենները**»: Հայաստանի Հանրապետության և Լիտվայի Հանրապետության միջև քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002 թ. ստորագրված պայմանագրի 15-րդ հոդվածում սահմանվում է. «**Տեղեկատվություն տրամադրելը Պայմանավորվող կողմերի արդարադատության նախարարությունները և Գլխավոր դատախազությունները հարցումներով փոխադարձ տեղեկատվություն են տրամադրում իրենց պետություններում գործող կամ նախկինում գործած օրենսդրության և արդարադատության հիմնարկների կողմից դրա կիրառման հարցերի վերաբերյալ**»: Իրավական օգնության շուրջ կնքված միջազգային երկկողմ մյուս պայմանագրերում կարգավորումները բոլորովին նույնական են վկայակոչված օրինակներին:

Երկկողմ պայմանագրերի համեմատությամբ՝ ավելին ասված չէ նաև ՀՀ ստորագրած՝ Մինսկի 1993 թ. և Քիշնևի 2002 թ. միջազգային բազմակողմ պայմանագրերում: Այսպես, Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հա-

ИнфотропикМедиа, 2012, էջ 89; Международноеправо: Учебник в 2 томах. Том 1.Общая часть /отв. Ред. С.Н. Лебедев, Е.В. Кабатова, М., Статут, 2011, էջ 303:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 90:

րաբերությունների մասին Մինսկի 1993 թ. կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանվում է. «Պայմանավորվող կողմերի արդարադատության կենտրոնական մարմինները, խնդրանքի դեպքում, միմյանց տրամադրում են տեղեկություններ իրենց տարածքներում գործող կամ գործած ներպետական օրենսդրության և արդարադատության մարմինների կողմից դրա կիրառման պրակտիկայի վերաբերյալ»:

Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Քիշնի 2022 թ. կոնվենցիայի 15-րդ հոդվածով սահմանվում է. «Իրավական հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը Պայմանավորվող կողմերի կենտրոնական արդարադատության հիմնարկները հարցման հիման վրա միմյանց տեղեկություններ են տրամադրում իրենց Պայմանավորվող կողմերի՝ գործող և նախկին ներպետական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի վերաբերյալ»:

Ինչպես նկատում ենք, վկայակոչված միջազգային պայմանագրերը խնդրո առարկային անդրադառնում են ոչ ավելի մակարդակով, քան սահմանվում է ՀՀ քաղ. օր. 1255-րդ հոդվածի 2-րդ մասում: Այս համեմատությունը բերվում է ոչ թե քննադատական, այլ ճանաչողական նպատակով՝ արձանագրելու, որ իրավական օգնության մասին կնքվող միջազգային պայմանագրերից ավելին ակնկալել չի կարելի, որ դրանք ունեն իրավական կարգավորման շատ լայն շրջանակներ և միայն վերևում հիշատակված ծավալով կարող էին լավագույն դեպքում անդրադառնալ ազգային օրենսդրության մասին տեղեկատվության տրամադրման հարցերին: Հատուկ ցանկանում ենք շեշտել, որ իրավական օգնության մասին ՀՀ ստորագրած միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրերի օրինակն ընդհանրական է, նույնպիսին է մոտեցումը մյուս բոլոր պետությունների կնքած համանման պայմանագրերում⁷:

Քննարկվող հարցերի առնչությամբ լավագույն աղբյուրը, որն ուղղակիորեն է վերաբերում հենց միայն հարցերի այս շրջանակին, հանդիսանում է 1968 թ. հունիսի 7-ին Լոնդոնում ստորագրված՝ Օտարերկրյա օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության մասին Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա)⁸:

Եվրոպական կոնվենցիան բավարար մանրամասնությամբ սահմանում է քայլերի հաջորդականությունը, թե Եվրոպայի կոնվենցիայի անդամ-պետությունների դատարաններն ինչպես կարող են ամփոփ տեղեկատվություն ստանալ անդամ-պետությունների օրենսդրության պաշտոնական մեկնաբանման և կիրառման պրակտիկայի վերաբերյալ, որն անհրաժեշտ է իրենց վարույթում գտնվող քաղաքացիական գործերով որոշումներ կայացնելու համար⁹: Այդ նպատակով՝ օտարերկրյա հարցումներին արձագանքելու համար անդամ-պետությունները ստեղծում կամ նշանակում են ազգային մամին (**Ստացող հաստատություն**): Անդամ պետություններն իրավունք ունեն նաև նշանակել մեկ կամ մի քանի ազգային մարմիններ (**Հասցեագրող հաստատություն**), որոնք օտարերկրյա պետությունների քաղաքացիական և առևտրային օրենսդրության կապակցությամբ ազգային դատարանների հարցումները կհասցեագրեն օտարերկրյա անդամ-պետությունների իրավասու մարմիններին: Ստացող և հասցեագրող հաստատությունների ցանկն անդամ-պետությունները փոխանցում են Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին: Համաձայն Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝

⁷ Стн Международное частное право: Учебник /Л.П. Ануфриева, К.А. Бекашев, Г.К. Дмитриева и др.: отв. ред. Г.К. Дмитриева. 2-е изд., М., Изд-во Проспект, 2004, էջ 168-169:

⁸ <https://rm.coe.int/1680072384>.

⁹ Եվրոպական կոնվենցիան վերաբերում է անդամ-պետությունների՝ բացառապես քաղաքացիական և առևտրային օրենսդրության հարցերով տեղեկատվության տրամադրմանը (Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին պարբերություն):

նույնիսկ երբ Հասցեագրող հաստատությունը հարցումն ինքն է ուղարկում անդամ-պետության Ստացող հաստատությանը, համարվում է, որ այդ հարցումը տրվել է դատական իշխանության կողմից: Եվրոպական կոնվենցիան հատուկ պահանջում է, որ նման հարցում ուղարկվի անդամ-պետության Ստացող հաստատությանը միայն այն դեպքում, երբ համապատասխան քաղաքացիական կամ առևտրային գործի քննություն իսկապես սկսվել է (3-րդ հոդվածի 1-ին պարբերություն):

Եվրոպական կոնվենցիան հստակ և բավարար մանրամասնությամբ սահմանում է հարցման կազմմանը վերաբերող պահանջները: Այսպես, հարցումը պետք է բովանդակի տեղեկատվություն այն դատական մարմնի մասին, որի անունից արվում է հարցումը, նրանում պետք է նշվեն՝ գործի բնույթը և առավելագույն ճշգրտությամբ պետք է շարադրվեն այն հարցերը, որոնց կապակցությամբ ցանկալի է ստանալ օտարերկրյա անդամ-պետության քաղաքացիական և/կամ առևտրային օրենսդրության պաշտոնական մեկնաբանման և կիրառման պրակտիկայի վերաբերյալ տեղեկատվություն: Երբ անդամ-պետությունն ունի մեկից ավել իրավական համակարգեր, ապա հարցման մեջ պետք է հստակեցվեն, թե հատկապես որ իրավական համակարգի վերաբերյալ է տեղեկատվությունը խնդրարկվում: Հարցման մեջ շարադրվում են անհրաժեշտ բոլոր հանգամանքները, որոնք Ստացող հաստատությանը կօգնեն առավել ճիշտ և ամբողջական տեղեկատվություն տրամադրել ազգային օրենսդրության վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում հարցմանը կից կարող են ներկայացվել փաստաթղթերի պատճեններ: Եթե հարցումն ուղարկվի խնդրարկվող պետությանը և պատասխանը կազմելիս պարզվի, որ այնուամենայնիվ կա լրացուցիչ նյութերի կամ տեղեկատվության անհրաժեշտություն, ապա խնդրարկվող պետության համապատասխան հաստատություններն իրավունք ունեն Հասցեագրող հաստատությունից պահանջել նման նյութեր կամ տեղեկատվություն: (Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդված):

Հարցումը նախապատրաստում է ազգային դատական մարմինը, իսկ երբ հարցումը պատրաստում է ոչ դատական մարմինը, բոլոր դեպքերում հարցումն ուղեկցվում է ազգային դատական մարմնի որոշմամբ:

Հարցումը և դրան կից ներկայացվող բոլոր նյութերը կազմվում են խնդրարկվող պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, եթե խնդրարկվող պետության պաշտոնական լեզուն ավել է մեկից (Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդված): Եթե հարցումը և կից փաստաթղթերը կազմվեն **խնդրարկող** պետության պաշտոնական լեզվով, ապա դրանք պետք է ուղեկցվեն **խնդրարկվող** պետության պաշտոնական լեզվով թարգմանությամբ¹⁰:

Ստացող մարմինը, ստանալով հարցումը, կամ ինքն է կազմում հարցման պատասխանը, կամ էլ հարցումն ուղարկում է պետական կամ պաշտոնական այլ հաստատության, որպեսզի վերջինս պատրաստի պատասխանը (Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին պարբերություն):

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Ստացող հաստատությունը հարցումն անհրաժեշտ դեպքերում կամ վարչական պատճառներից ելնելով հարցումն իրավունք ունի ուղարկել մասնավոր հաստատության կամ որակավորված իրավաբանի, որոնք էլ կպատրաստեն հարցման պատասխանը: Եվ պետական կամ մասնավոր

¹⁰ Եվրոպական կոնվենցիան նախատեսում է այն հնարավորությունը, որ անդամ-պետությունները կարող են երկկողմ կամ բազմակողմ ձևաչափով որոշել և շեղվել կոնվենցիայի 4-րդ հոդվածի պահանջից: Ենթադրվում է, որ անդամ-պետությունները, որպես հնարավոր տարբերակ, կարող են ընտրել որևէ այլ լեզու, քան իրենց պաշտոնական լեզուներն են (դիցուք՝ անգլերեն), և շրջանառվել այդ լեզվով:

հաստատության, կամ որակավորված իրավաբանի կողմից նման ծառայության մատուցումն ուղեկցվում է հարակից ծախսերով, ապա Ստացող հաստատությունը մինչև հարցումն ուղարկելն առավելագույն ճշգրտությամբ տեղեկացնում է հնարավոր ծախսերի մասին, ստանում է դրանց վճարման վերաբերյալ համաձայնություն, որից հետո միայն ուղարկում է հարցումը:

Շատ կարևոր է պարզել, թե որքանով է պարտադիր համարվում, որ հարցմանն անպայման պետք է պատասխան տրվի: Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանվում է, որ Ստացող մարմինը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձամբ կամ վերևում նշված անձանց ներգրավմամբ՝ պատասխանն ներկայացնելու համար (Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդված): Սակայն այս պարտականությունը բացարձակ չէ, խնդրարկվող պետությունը կարող է հրաժարվել նման պատասխան ներկայացնելու հարցում, եթե խնդրարկվող պետության շահերը շոշափվում են այն գործով, որի հետ կապված է հարցումը, կամ եթե նույնիսկ կապված չէ այդ գործի հետ, խնդրարկվող պետությունը կարող է մերժել հարցմանը պատասխան ներկայացնել, եթե դրանով կարող է վնաս պատճառվել իր սովորելությանը կամ անվտանգությանը (Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդված):

Թե ինչպիսի բովանդակային նկարագիր և ինչպիսի մասնագիտական նյութերի ուղեկցություն պետք է ունենա հարցման պատասխանը, Եվրոպական կոնվենցիան բավարար մանրամասնությամբ անդրադարձել է նաև այս հարցին: Համաձայն Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի՝ հարցման պատասխանը հետապնդում է խնդրարկող պետության դատական մարմնին առավել օբյեկտիվ և անկողմնակալ տեղեկատվություն տրամադրելու նպատակ: Հարցման պատասխանը կարող է ուղեկցվել համապատասխան իրավաբանական տեքստերով և դատական որոշումներով: Ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգտակար լինել խնդրարկվող պետության օրենսդրությունը հասկանալու և տիրապետելու համար, կարող է ներառվել պատասխանում, դա ենթադրում է նույնիսկ իրավական դոկտրինայից կամ մասնագիտական լուսններից հակիրճ տեղեկատվություն: Հարցումը կարող է ուղեկցվել բացատրական պարզաբանումներով:

Հարցման պատասխանը տրվում է հնարավորինս արագ: Սակայն այստեղ ժամանակային սահմանափակումներ չկան նախատեսված: Երբ հարցման հնարավոր պատասխանը ծավալուն է և կարող է մեծ ժամանակ պահանջել, Ստացող հաստատությունը Հասցեագրող հաստատությանը տեղեկացնում է այդ մասին և նշում է պատասխանն ուղարկելու հավանական ժամկետների մասին:

Հարցման պատասխանը տրվում է խնդրարկվող պետության պաշտոնական լեզվով (Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդված):

Խնդրարկող պետության դատական մարմնի համար հարցման պատասխանով ներառվող տեղեկատվությունը որևէ իրավական հետևանք չի հարուցում, այսինքն՝ ազգային դատական մարմինը պատասխանատվություն չի կրում դրա հիման վրա կայացրած որոշման համար (Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված):

Ակնդետ երևում է, թե Եվրոպական կոնվենցիայով որքան են մանրամասնված դետալները, թե ազգային դատարաններն ինչպես կարող են հաղթահարել օտարերկրյա իրավունքը տիրապետելու և դրա հիման վրա քաղաքացիական վեճը լուծելու՝ «Jura novit curia» իմպերատիվը¹¹: Բնականաբար, այդ գործընթացը կարող է ենթադրել կազմակերպական և իրավական բնույթի լրացուցիչ մանրամասներ, որոնք արդեն կարող են նախա-

¹¹ Տե՛ս *Касаткина А.Ю.*, Об установлении содержания норм иностранного семейного права, Закон и Право, 10, 2020, էջ 72-75:

տեսվել Եվրոպական կոնվենցիայի անդամ-պետությունների ներպետական իրավական ակտերով, որոնք նրանք կրնդունեն այս կոնվենցիայի միանալով: Ցավոք Հայաստանի Հանրապետությունը, չլինելով Եվրոպական կոնվենցիայի անդամ-պետություն, զրկված է նաև դրանով ընձեռվող հնարավորություններից օգտվելուց¹²: Այդ հնարավորությունները մեզ համար կենսական են ոչ միայն ՀՀ քաղ. օր. 1255-րդ հոդվածի համատեքստում, այլև ավելի լայն՝ ՀՀ դատաիրավական բարեփոխումների համատեքստում¹³: ՀՀ կառավարության կողմից 2022 թ. հուլիսի 21-ին ընդունված N 133-L որոշմամբ հաստատվել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. Ռազմավարությունը, որով նախատեսվում է, ի թիվս այլ հանգամանքների, նաև դատարանների արդյունավետության բարձրացումը¹⁴: Եվրոպական կոնվենցիային ՀՀ անդամակցումն ազգային դատարաններին հնարավորություն կտա խնդրո առարկայի մասով էականորեն բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը: Եվրոպական կոնվենցիային ՀՀ անդամակցումը լրացուցիչ հեռանկարներ կբացի ներպետական մասնավոր իրավաբանական հաստատությունների և արհեստավարժ իրավաբանների համար, որոնք Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի ուժով կարող են ներգրավվել հարցման պատասխաններ պատրաստելիս: Սա ևս համապատասխանում է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. Ռազմավարությանը, որը նպատակ է հետապնդում ապահովել փաստաբանական համայնքի արհեստավարժության շարունակական բարձրացումը¹⁵:

Եվրոպական կոնվենցիայի անդամակցելը կարող է նաև անհամեմատ բարելավել միջազգային մասնավոր հարաբերությունների իրավական կարգավորման վիճակը և շեշտակիորեն բարձրացնել Հայաստանի Հանրապետության ինտեգրացիոն վարկանիշը:

Annotation. When a national conflict of laws rule chooses a foreign law, the court is bound to apply the foreign law. However, the court does not own foreign law, and the state must help the court to clarify the content of foreign law.

National civil legislation provides for such mechanisms, but these mechanisms are not enough. A sufficient number of such mechanisms are provided by the European Convention on Information Relating to Foreign Laws of 1968, but the Republic of Armenia has not acceded to the European Convention.

The scientific article presents in details the necessary mechanisms and assesses the possible membership of the Republic of Armenia in the European Convention, which can significantly contribute to the ongoing legal reforms.

Аннотация. Когда национальная коллизийная норма выбирает иностранное право, суд обязан применить иностранное право. Однако суд не владеет иностранным правом, и государство должно помочь суду разъяснить содержание иностранного права.

Национальное гражданское законодательство предусматривает такие механизмы, но их недостаточно. Достаточное количество таких механизмов предусмотрено Европейской конвенцией об информации относительно иностранного законодательства от 1968 года, но Республика Армения не присоединилась к данной конвенции.

В научной статье подробно представлены необходимые механизмы и оценено возможное членство Республики Армения в Европейской конвенции, что может способствовать эффективности проводимых правовых реформ.

¹² <https://www.coe.int/en/web/conventions/full-list?module=signatures-by-treaty&treaty-num=062>.

¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166582>.

¹⁴ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf.

¹⁵ https://www.arlis.am/Annexes/6/2022_N1133hav.1.pdf.

Բանալի բառեր – կոլիզիոն նորմ, դատարան, օտարերկրյա իրավունք, մեկնաբանություն, դատական պրակտիկա, ռազմավարություն, արդյունավետություն, Եվրոպական կոնվենցիա, անդամ-պետություն:

Keywords: *conflict rule, court, foreign law, interpretation, jurisprudence, strategy, effectiveness, European Convention, member state.*

Ключевые слова: *коллизийная норма, суд, иностранное право, толкование, судебная практика, стратегия, эффективность, Европейская конвенция, государство-член.*

Հայկյանց Ա. - պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, էլ. հասցե՝ haykyants@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 17.04.2023թ., տրվել է գրախոսության 17.04.2023 թ., երաշխավորվել է պրոֆեսոր, իր. գիտ. դոկտոր Վ. Ավետիսյանի կողմից, ընդունվել է տպագրության 19.04.2023 թ.: